



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ  
ԼՈՒՌԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ

☒ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92

Fax /0322/ 2-07-70

թիվ \_\_\_\_\_  
« \_\_\_\_\_ » \_\_\_\_\_ 2018թ.

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի «Հետք»  
թերթի լրագրող Գրիշա Բալասանյանին

Ի պատասխան Ձեր 11.01.2018թվականի գրության

Հարգելի պարոն Բալասանյան

1. 2016 թվականին Լոռու մարզի 55 համայնք ջուր ստացել է կենտրոնական  
ջրամատակարարման համակարգից:

Վանաձոր, Լեռնապատ, Շահումյան, Գուգարք, Փամբակ, Վահագնաձոր, Վահագնի,  
Եղեգնուտ, Ձորագետ, Ձորագյուղ, Անտառամուտ, Կուրթան, Դարպաս,  
Գյուլագարակ, Հոբարձի, Վարդաբլուր, Ամրակից

Սպիտակ, Մեծ Պարնի, Ջրաշեն, Լեռնավան, Շիրակամուտ, Մեծ Պարնի (Նոր գյուղ,  
հին գյուղ) Կաթնաջուր, Սարալանջ

Ստեփանավան, Արմանիս, Լոռի Բերդ, Ուռուտ, Ագարակ, Յաղդան, Կողես,  
Բովաձոր

Տաշիր, Սարատովկա, Մեղովկա, Դաշտադեմ, Մեծավան, Ձյունաշող, Միխայլովկա,  
Ձորամուտ, Պետրովկա, Նորաշեն

Ալավերդի, Աքրի, Օձուն, Ամոջ, Արդվի, Այգեհատ, Արեւածագ, Ծաթեր, Կարմիր  
Աղեկ, Հագվի, Նեղոց, Քարկոփ

«Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության եւ մարզի համայնքների միջեւ պայմանագրեր կնքելու գործընթացը շարունակվում է, հետեւաբար ներկայացված ցանկը ենթակա է փոփոխության:

2017թվականին մարզում համայնքների խոշորացումից հետո «Վեոլիա ջուր» ՓԲ ընկերության սպասարկման տարածքում առկա է 37 համայնք 28 բնակավայրով:

Դրանք են.

Վանաձոր, Լեռնապատ, Շահումյան, Գուգարք, Փամբակ, Վահագնաձոր, Վահագնի, Եղեգնուտ, Ձորագետ, Ձորագյուղ, Անտառամուտ, Կուրթան, Դարպաս, համայնք **Գյուլագարակ**, Հոբարձի, Վարդաբլուր, Ամրակից բնակավայրեր

Սպիտակ, Մեծ Պարնի, Ջրաշեն, Լեռնավան, Շիրակամուտ, Մեծ Պարնի (Նոր գյուղ, հին գյուղ) Կաթնաջուր, Սարալանջ

համայնք **Ստեփանավան**, Արմանիս բնակավայր, համայնք **Լոռի Բերդ**, Ուռուտ, Ագարակ, Յաղդան, Կողես, Բովաձոր, Սվերդլով բնակավայրեր

համայնք **Տաշիր**, Սարատովկա, Մեղովկա,Դաշտադեմ բնակավայրեր, համայնք **Մեծավան**,Ձյունաշող, Միխայլովկաբնակավայրեր, համայնք **Սարչապետ** Ձորամուտ, Պետրովկա, Նորաշեն բնակավայրեր

համայնք **Ալավերդի**, Աքորի բնակավայր, համայնք **Օձուն**, Ամոջ, Արդվի, Այգեհատ,Արեւածագ, Ծաթեր, Կարմիր Աղեկ. Հազվի բնակավայրեր, համայնք **Ախթալա**, Նեղոց բնակավայր, համայնք **Շնող**, Քարկոփ բնակավայր

2. Լոռու մարզի 36 համայնք (30 բնակավայրով) չի օգտվում կենտրոնական ջրամատակարարման համակարգից: Նրանք հիմնականում խմելու ջրի պաշարները ստանում են սարերի բնական աղբյուրներից, սակայն ջրագծերի մաշվածությունը թույլ չի տալիս պահպանել եւ բնակիչներին հասցնել խմելու ջրի ողջ պաշարը: Այս համայնքներում խմելու ջրամատակարարումն իրականացվում է տարբեր գրաֆիկներով (միջինը` 4-12 ժամյա):

3. Մարզի բոլոր համայնքներում եւ բնակավայրերում իրականացվում է խմելու ջրի վնասազերծում.

Չնայած սեփական ջրամատակարարման համակարգ ունեցող համայնքները համայնքային եւ բարեգործական կազմակերպությունների կողմից տրամադրված միջոցներով պարբերաբար իրականացնում են վերանորոգման աշխատանքներ (կապտածների վերանորոգում, խողովակային ցանցի տեղային վերանորոգում կամ փոխարինում եւ այլն), որոշ համայնքներում ներքին ցանցի խիստ

մաշվածության կամ բացակայության պատճառով կատարված աշխատանքների արդյունավետությունը ցածր է:

**Ձեր կողմից ներկայացված 4-րդ եւ 5-րդ կետերի վերաբերյալ** հայտնում եմ, որ ՀՀ առողջապահության նախարարության «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից իրականացվում է շարունակական վերահսկողություն (մոնիտորինգ) բնակչությանը տրվող խմելու ջրի որակի նկատմամբ: Մոնիտորինգի արդյունքները ստանալուն պես մարզպետարանի համապատասխան ստորաբաժանման կողմից շրջաբերական գրություն է ուղարկվում համապատասխան համայնքների ղեկավարներին, նրանց հանձնարարվում է հետեւողական աշխատանքներ տանել խմելու ջրի նկատմամբ արձանագրված թերությունների վերացման ուղղությամբ, մանրամասն տեղեկություն ներկայացնել կատարված աշխատանքների վերաբերյալ: 2016 թվականի I եւ II կիսամյակների եւ 2017 թվականի I կիսամյակի մոնիտորինգի արդյունքները կցվում են (2017 թվականի II կիսամյակի արդյունքները դեռեւս չի ստացվել):

6. Համաձայն «Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի «Լոռի» մասնաճյուղի կողմից տրված տեղեկատվության 2017 թ. սեպտեմբեր ամսին Մեծավան համայնքից «Տաշիրի բժշկական կենտրոն» ՓԲԸ է ընդունվել 10 հիվանդ՝ աղիքային ինֆեկցիա ախտորոշմամբ: Տնային համայցերի ընթացքում հայտնաբերվել է ևս 12 հիվանդ: Բոլոր հիվանդները ստացել են համապատասխան բուժօգնություն:

Աղիքային վարակների պատճառ կարող է հանդիսանալ այն հանգամանքը, որ ջրի քանակությունը գյուղին չի բավականացնում, ջուրը տրվում է ընդհատումներով՝ 2-3 օրը մեկ, կարճ ժամանակով: Խմելու ջրի նորմերին չհամապատասխանելու պատճառ կարող է հանդիսանալ խողովակաշարում ջրի 2-3 օր մնալը: Վարակների պատճառ կարող է հանդիսանալ նաև այն հանգամանքը, որ բնակիչները խմելու նպատակով օգտագործում են տարաներում 2-3 օր հավաքված ջուր, բացի այդ, ջուր չունենալու պատճառով կենցաղում պատշաճ սանիտարահիգիենիկ վիճակ չի պահպանվում:

Կատարվել են ջրի անհրաժեշտ սանիտարական մշակման աշխատանքներ: Ջրի որակը պահպանելու նպատակով գյուղապետին առաջարկվել է հետագայում հետևողական կերպով կատարել ջրի վարակազերծման աշխատանքներ:

7. 2016 թվականի տվյալներով մարզում 29 համայնք ունեցել է խմելու ջրամատակարարման ներքին ցանցի կառուցման կամ վերակառուցման կարիք: Դրանք են՝ Մեծ Այրում, Ջիլիզա, Հովնանաձոր, Լորուտ, Դուրսալի, Մղարթ, Արծնի, Ազնվաձոր, Գեղասար, Բագում, Ուրասար, Մարց, Աթան, Պուշկինո, Արդվի, Ձորամուտ, Կաթնառատ, Հաղպատ, Սվերդլով, Լուսաղբյուր, Սարատովկա, Կաթնաղբյուր, Ահնիձոր, Փամբակ, Նոր Խաչակապ, Բլագոդարնոյե, Ծաղկաբեր, Ապավեն, Թեղուտ համայնքները:

2017 թվականին նշված համայնքներից Հաղպատ համայնքում, համայնքային բյուջեի եւ ՀՀ պետ. բյուջեի համատեղ ֆինանսավորմամբ իրականացվել են խմելու ջրամատակարարման

եւ ջրահեռացման համակարգի վերակառուցման աշխատանքներ, իսկ Սվերդլով համայնքի խմելու ջրագծի կառուցման աշխատանքներն իրականացվել են ՀՀ ԿԱ «ԳՏՏԶ ԾԻԳ» ՊՀ կողմից՝ վարկային միջոցների եւ Սվերդլովի համայնքային բյուջեի համաֆինասավորմամբ:

Առդիր՝ I եւ II կիսամյակների եւ 2017 թվականի I կիսամյակի մոնիտորինգի արձանագրություններ:

Հ ա ր գ ա ն ք ն վ՝

Մ Ա Ր Զ Պ Ե Տ



Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ